ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

08.03.2025

Սիրելի՛ կանայք, մայրեր, դուստրեր ու քույրեր

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Մարտի 8-ի կապակցությամբ:
Այս գարնանային տոնը ևս մեկ հրաշալի առիթ է ձեզ երախտագիտության և հիացմունքի անկեղծ խոսքեր հղելու համար, քանի որ դուք կյանքը լցնում եք իմաստով, գեղեցիկով, հույսով և ներդաշնակությամբ:
Թո՛ղ ձեր կյանքն ուղեկցվի առավել շատ երջանկությամբ և ուրախությամբ, ծաղիկներով, ժպիտով և ուշադրությամբ:
Տոնական այս օրը նաև անկեղծորեն շնորհակալություն եմ հայտնում Սյունիքի կանանց այն ամենի համար, ինչ արել եք և շարունակում եք անել մեր մարզի համար, քանի որ ձեր ներդրումն ու հոգատար ձեռքն ամենուր է՝ բոլոր բնագավառներում. շնորհակալությո՛ւն՝ ձեռքբերումների, մայրենի հողին նվիրվածության համար:
Ձեր սերը, ջերմությունը, իմաստնությունը, մտահոգություններն ու խոհեմությունը, մասնագիտական նվաճումներն օգնում են բոլորիս, ոգեշնչում հասնելու նոր հաջողությունների, ձեռնարկելու համարձակ գործողություններ, և դուք ձեր ամենօրյա ներդրումն ունեք մեր ընդհանուր ներկայի ու ապագայի մեջ:
Եվ թո՛ղ ոչ միայն այսօր, այլև տարվա յուրաքանչյուր օր ձեր սիրելիները հնարավորինս շատ հոգատարություն և ուշադրություն ցուցաբերեն ձեր հանդեպ:
Բոլորիդ մաղթում եմ խաղաղություն, առողջություն, բարեկեցություն, լավատեսություն, պայծառ իրադարձություններ, նվիրական ցանկությունների իրականացում, ընտանեկան ջերմություն ու մասնագիտական ձեռքբերումներ: